


26. 884

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀՐԱՀԱՆԳ № 33357

Յերրորդ Հնգամյակի (յերրորդ տարվա բաժնի) պեսական
փոխառությունը ֆաղաֆների յեժ գյուղական վայրերի
բանվորների ու ծառայողների, նաե՛վ ֆաղաֆների ու
ֆաղաֆասիպ ավանների սնայնագործների յեժ այլ բնակ-
չության սեժ իրացնելու պայմանների ու կարգի մասին



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԾԽԽՆԱՑԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 4 0



Գլխավորի լիազոր՝ Զ—1159. Հրատ. 5271.

Պատվեր 437. Տիրաժ 5000.

Հանձնված է արտադրության 4 ապրիլի 1940 թ.

Ստորագրված է տպագրության համար 11 հունիսի 1940 թ.

Հայկահայրատի տպարան, Յերևան, 1940 թ. 65

3554
40

1. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յերրորդ հնգամյակի (յերրորդ տարվա բաժնի) փոխառության իրացումն անցկացվում է բաժնեգրության կարգով և այն հիմունքով, վոր յուրաքանչյուր աշխատավոր բաժնեգրությանը մասնակցում է կամավոր կերպով:

2. Յուրաքանչյուր բաժնորդ ինքն է իր ցանկությամբ ընտրում փոխառության մասը (անպայման շահող կամ տոկոսաբեր) և պարտատոմսերի արժողութունը, վորոնց բաժնեգրվում է նա:

25 և 10 ռուբլու արժողութուն ունեցող պարտատոմսերի բաժնեգրությունն ընդունվում է միայն այն դեպքերում, յերբ բաժնեգրության գումարից յեղնելով, հնարավոր է տալ ավելի խոշոր արժողության պարտատոմսեր:

3. Քաղաքների և գյուղական վայրերի բանվորներն ու ծառայողները, նաև քաղաքների ու քաղաքատիպ ավանների տնայնապետները և մյուս բնակչությունը բաժնեգրությամբ ձեռք բերվող պարտատոմսերի արժեքը վճարում են մաս-մաս կամ, ըստ իրենց ցանկության, միանվազ:

4. Բաժնեգրությամբ ձեռք բերվող պարտատոմսերի վճարման համար տրվում է 10 ամսյա ժամկետ— 1940 թվի հուլիսի 1-ից մինչև 1941 թվի ապրիլը ներառյալ:

5. Բանվորներն ու ծառայողները բաժնեգրությամբ ձեռք բերվող պարտատոմսերի արժեքը վճարում են այն ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահության միջոցով, վորը բաժնեգրության մուծումները պահում է բաժնորդների աշխատավարձից: Առաջին մուծումը վճարվում է 1940 թվի հուլիսի առաջին կեսի աշխատավարձից, իսկ վերջին մուծումը— 1941 թվի ապրիլի յերկրորդ կեսի աշխատավարձից:

Արտեղների վարչությունները փոխառության բաժնեգրության մուծումները կոոպերացված տնայնապետների աշխատավարձից պահում են այդ նույն կարգով:

6. Բանվորներն ու ծառայողներն և կոոպերացված տնայնա-

գործները բաժանեցրուծյան մուծումները ձեռնարկուծյան, հիմնարկուծյան կամ արտելի հաշվապահուծյունը պահում է ինչպես աշխատավարձի դիմաց ավանսով տրվող գումարները, նույնպես և աշխատավարձի վերջնական հաշվահարդար տրվող գումարները: Ավանսից պահվում է ամսական մուծման մի մասը՝ տրվող ավանսի չափին համապատասխան:

Աշխատավարձը բաժանորդին նախապես տալու դեպքում (արձակուրդ և այլն) մուծումները պահվում են այն ժամանակի համար, վորի համար տրվում է աշխատավարձը:

7. Բանվորներն ու ծառայողները մի ձեռնարկուծյունից կամ հիմնարկուծյունից մյուսն անցնելու դեպքում՝ փոխառուծյան բաժանեցրուծյունը կարող են պահպանել ձևակերպելով այդ իրենց բաժանեցրուծյունը աշխատելի նոր տեղում: Աշխատանքի տեղը փոխած բանվորը կամ ծառայողը բաժանեցրուծյունը աշխատանքի նոր տեղում ձևակերպում է այն դումարով, վորպեսին նա ցանկանում է վճարել մինչև մասմաս վճարումների համար սահմանված ժամկետների վերջնալը, այսինքն՝ մինչև 1941 թվի ապրիլը ներառյալ:

8. Ձեռնարկուծյան, հիմնարկուծյան կամ արտելի հաշվապահուծյունը փոխառուծյան պարտատոմսերը տալիս է բաժանորդներին, նրանց կողմից բաժանեցրուծյունը լրիվ չափով վճարելուց հետո:

Այն բաժանորդը, վորը հեռանում է կոլլեկտիվից մինչև փոխառուծյան մասմաս վճարումների ավարտումը, կարող է ժամկետից առաջ վճարել իր բաժանեցրուծյան ամբողջ գումարը և պարտատոմսեր ստանալ ալդ գումարի չափով:

Բաժանեցրուծյունը վորչ ամբողջությամբ վճարելու դեպքում՝ հեռացող բաժանորդը պարտատոմսեր ստանում է վճարված մուծումների չափով: Հեռացող բաժանորդին վճարվող աշխատավարձից հերթական մուծում է պահվում այնքան, վորպեսզի հնարավոր լինի բաժանորդին պարտատոմս տալ մուծումների ամբողջ վճարված գումարի չափով:

9. Բաժանեցրուծյան տեղում պարտատոմսեր չստացած բաժանորդները կարող են վճարված մուծումների գումարի չափով պարտատոմսեր ստանալ կենտրոնական (չրջանային) խնայողական գրամարկում մինչև 1942 թվի հունիսի 1-ը:

Պարտատոմսերը խնայողական գրամարկում ստանալու համար բաժանորդները վճարված մուծումների գումարի մասին

տեղեկանքներ են ներկայացնում բաժանեցրուծյան տեղի ձեռնարկուծյունից կամ հիմնարկուծյունից:

1942 թվի հունիսի 1-ից բաժանորդները կորցնում են պարտատոմսերն ստանալու իրավունքը:

2. ՓՈՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՅՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Փոխառուծյան իրացումը կազմակերպում են քաղաքային (չրջանային) ֆինանսային բաժինները և կենտրոնական (չրջանային) խնայողական գրամարկները՝ պետական վարկին և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովներին միջոցով, աշխատավորների դեպուտատների քաղաքային և չրջանային խորհուրդների գործկոմների ղեկավարությամբ:

11. Մինչ փոխառուծյան բաժանեցրուծյունն սկսելը յուրաքանչյուր կոլլեկտիվում անցկացվում է աշխատավորների ժողովներ՝ փոխառուծյան թողարկման նշանակությունը և նրա իրացման կարգն ու պայմանները բացատրելու համար:

12. Փոխառուծյան բաժանեցրուծյունն անց են կացնում ուժանդակող հանձնաժողովները լիազորները: Բաժանեցրուծյունն ընդունվում է № 1 ձևի բաժանեցրուծյան թերթերով:

Սույն կազմակերպություններում, ձեռնարկուծյան հաշվապահության և ուժանդակող հանձնաժողովի հայեցողությամբ և խնայողական գրամարկի համաձայնությամբ՝ բաժանեցրուծյունն անց է կացվում № 1-ը ձևի «փոխառուծյան բաժանեցրուծյան քարտերով» (առանձին քարտ յուրաքանչյուր բաժանորդի համար):

Յուրաքանչյուր բաժանորդ իր ստորագրությամբ վավերացնում է իր կողմից հայտարարված բաժանեցրուծյան գումարը բաժանեցրուծյան թերթում կամ «փոխառուծյան բաժանեցրուծյան քարտում», վորոնք հիմք են ծառայում բաժանեցրուծյան մուծումները ձեռնարկուծյան կամ հիմնարկուծյան հաշվապահության կողմից բաժանորդների աշխատավարձից պահելու համար:

13. Բաժանորդների կողմից լրացրած բաժանեցրուծյան թերթերը կամ «փոխառուծյան բաժանեցրուծյան քարտերը» լիազորները հանձնում են ուժանդակող հանձնաժողովներին: Ուժանդակող հանձնաժողովն ստուգում է բաժանեցրուծյան թերթերի լրացման ճշտությունը (մասնավորապես՝ բաժանորդների սեփական ձեռքով արված ստորագրությունների առկայությունը) և բաժանեցրուծյան թերթերն առանց ձգձգման ստորագրությամբ

հանձնում և հաշվապահությանը՝ պահելու, բաժնեգրության հաշվառման և բաժանորդների ու խնայողական դրամարկղի հետ փոխառության հաշվարկումներ կատարելու համար:

14. Բանկորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Մովային նավատորմի զորամասերի և հիմնարկությունների՝ անձնակազմի փոխառության բաժնեգրությունը, նաև բաժնե-դրության հաշվարկումներն ու հաշվառումը կատարվում և հա-տուկ հրահանգների հիման վրա, վորոնք հրատարակվում են ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի, ԽՍՀ Միության Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի և Ռազմա-Մովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարիատի համաձայնությամբ:

Անձնակազմի բաժնեգրության ընդհանուր դումպը զորա-մասերի և հիմնարկությունների ֆինանսական մարմինները հայտնում են տեղական կենտրոնական (չրջանային) խնայողա-կան դրամարկղին մեկ անգամ—բաժնեգրությունն անցկացնելուց հետո: Այդ նույն խնայողական դրամարկղն են փոխանցում զո-րամասերն ու հիմնարկությունները բաժնորդներից մուտք չեղած մուծումները և ստանում են նրանից փոխառության պարտատոմսեր՝ բաժանորդներին հանձնելու համար:

Խնայողական դրամարկղները հսկողություն չեն կիրառում Բանկորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Մովային Նավատորմի զորամասերում և հիմնարկություններում բաժնեգ-րություն անցկացնելու և բաժնեգրության հաշվարկումների ու հաշվառման դրության վրա:

15. Յերկաթուղային տրանսպորտի բանկորներն ու ծառա-յողների մեջ փոխառության բաժնեգրությունն անց են կացնում յերկաթուղային տրանսպորտի տնտեսական միավորներին կից յե-ղած ոժանդակող հանձնաժողովները:

Յուրաքանչյուր տնտեսական միավոր իր բոլոր բանկորնե-րի և ծառայողների փոխառության բաժնեգրությունը ձևակեր-պում և այն կենտրոնական (չրջանային) խնայողական դրամարկ-ղում, վորի տերիտորիայում գտնվում և տնտեսավորի հաշվա-պահությունը, նաև այդ խնայողական դրամարկղի հետ կառու-րում և փոխառության բաժնեգրության բոլոր հաշվարկումնե-րը— փոխանցում և փոխառության համար պահված մուծում-ները, պարտատոմսեր և ստանում բաժանորդներին հանձնելու համար, ներկայացնում և սահմանված հաշվետվություն և այլն:

16. Գետային նավատորմի նավարկության անձնակազմի բանկորների և ծառայողների մեջ փոխառության բաժնեգրու-թյան անկացումը՝ պետական վարկին և խնայողական դործին ոժանդակող նավային հանձնաժողովի միջոցով, կազմակերպում են այնտեղի քաղաքային (չրջանային) ֆինանսական բաժինները և կենտրոնական (չրջանային) խնայողական դրամարկղները, վորտեղ գտնվում են գետային նավագնացությունները:

Նավագնաց անձնակազմի բաժնեգրության հաշվառումն ու հաշվարկումները տանում և գետային նավագնացության հա-վապահությունը կամ նրա հանձնարարությամբ՝ կենտրոնական տրանզիտային դրամարկղը՝ ԽՍՀ Միության Գետային Նավա-տորմի Ժողովրդական Կոմիսարիատի հատուկ հրահանգի հիման վրա, վորը համաձայնեցված և ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հետ:

Նավամատույցներին վերադրված կամ նավավերանորոգման և նավաշինարարության դործարաններին և այլ ձեռնարկու-թյուններին կից գտնվող տեղական նավատորմի բաժնեգրության հաշվարկումները կատարվում են ընդհանուր հիմունքներով՝ նա-վամատույցների կամ ձեռնարկությունների տեղում գտնված կետրոնական կամ (չրջանային) խնայողական դրամարկղի հետ:

17. Փոխառությանը բաժնեգրված բարձրագույն ուսումնա-կան հաստատությունների և տեխնիկումների ուսանողները բաժ-նեգրությամբ ձեռք բերած պարտատոմսերի արժեքը վճարում են ուսումնական հաստատության հաշվապահության միջոցով, վորը բաժնեգրության մուծումները պահում և ուսանողներին վճար-վող թոշակից:

18. Թոշակառուների մեջ բաժնեգրություն են անցկացնում լիազորները, վորոնք ընտրվում են թոշակառուների կողմից՝ իրենց ժողովներում: Ժողովները հրավիրում և խնայողական դրամարկղը այն կազմակերպության միջոցով, վորը թոշակներ և վճարում: Այդ նույն կազմակերպությունը փոխառության հաշվարկումներ և կատարում բաժանորդների հետ:

19. Տնային տնտեսուհիների, տնային աշխատողների և չկո-տպերացված տնայնագործների մեջ փոխառության բաժնեգրու-թյուն անցկացնում են կենտրոնական (չրջանային) խնայողա-կան դրամարկղները՝ քաղաքային (չրջանային) ոժանդակող հանձնաժողովների հետ միասին, վորոնք բաժնեգրության անց-կացման համար լիազորներ են առանձնացնում իրենց ակտիվից:

Այդ բաժնեգրութեան մուծումները հաւաքում են տնային վարչութիւնները՝ բնակարանային վարձը բնակիչներէց ստանալու հետ միաժամանակ: Փոխառութեան մուծումները մտցվում են բնակվարձի ծանուցադիր-հաշվաքի մէջ: Փոխառութեան մուծումների վճարումն ուղացնելու համար տույժ չի բարդվում:

Հաւաքած մուծումները հանձնվում են (փոխանցվում են տնային վարչութեան ընթացիկ հաշվից) խնայողական դրամարկդին վոչ պակաս, քան 5 որը մեկ անգամ:

20. Մասնավոր անձերին պատկանող տներում բնակվող տնային տնտեսուհիների, տնային աշխատողների և չկոռպերացված տնայնագործների բաժնեգրութեան մուծումները հաւաքում են խնայողական դրամարկդները իրենց լիազորների միջոցով: Լիազորներն առանձնացվում են Ֆինանսական ակտիվից: Լիազորներից ստորագրութիւն ե վերցվում այն մասին, վոր նրանք նյութական պատասխանատվութիւն են կրում բաժնեգրութեան հաւաքած մուծումների անվթարութեան և ժամանակին խնայողական դրամարկդին հանձնելու նաև բաժնորդներին լաժանելու համար խնայողական դրամարկդից ստացված պարտատոմսերի անվթարութեան համար:

Խնայողական դրամարկդը լիազորներին տալիս ե մուծումներ հաւաքելու իրաւունքի վկայական և յուրաքանչյուր լիազորի կցում ե բաժնորդների վորոչ խմբին:

Լիազորները բաժնորդներից մուծումները հաւաքում են №52 ձևի հաշվարկային անդորրագրերով: Հաշվարկային անդորրագրերը լիազորներն ստանում են խնայողական դրամարկդից: Այդ բաժնորդների բաժնեգրութեան թերթերը պահվում են խնայողական դրամարկդում:

Մուծումների հաւաքման աշխատանքների համար լիազորները խնայողական դրամարկդից վարձատրութիւն են ստանում հաւաքած մուծումների դումարի 2 տոկոսի չափով:

21. Սխտեմատիկորեն աշխատավարձ չստացող աշխատավորների մէջ (վոսկու հանքերում, հրատարակչութիւններում, տեսարանային ձեռնարկութիւններում և այլն) փոխառութեան իրաւունքն անցկացվում ե կամ մաս-մաս վճարումները բաժնեգրութեան կարգով, կամ պարտատոմսերը կանխիկ հաշվով վճարելու միջոցով:

22. Համատեղութեամբ աշխատողների մէջ փոխառութեան

բաժնեգրութեան անցկացվում ե ինչպես հիմնական աշխատանքի տեղում, այնպես ել համատեղութեամբ աշխատելու տեղում:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՐԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Գաւաղային (չրջանային) ֆինանսական բաժինների վարչները և կենտրոնական (չրջանային) խնայողական դրամարկդները վարչները պատասխանատու յեն փոխառութեան հաշող իրացման համար, բաժնեգրութեան դրամները ժամանակին և լրիվ չափով մուտք լինելու և պարտատոմսերը ժամանակին բաժնորդներին հանձնելու համար:

24. Ֆինանսական բաժինների և խնայողական դրամարկդների վրա յե դրվում՝

ա) Փոխառութեան բաժնեգրութեան կալմակերպումը պետական վարկին և խնայողական դրմին ոժանդակող հանձնաժողովների միջոցով՝ բոլոր ձեռնարկութիւններում, հիմնարկութիւններում, ուսումնական հաստատութիւններում, տնային վարչութիւններում և այլն:

բ) Ձեռնարկութիւնների և հիմնարկութիւնների հաշվապահութիւնների միջոցով փոխառութեան բաժնեգրութեան հաշվարկումներ անցկացնելը և բաժնորդներին պարտատոմսեր տալը:

Փոխառութեան բաժնեգրութեան անցկացման կարգի մասին ոժանդակող հանձնաժողովներին հրահանգները և փոխառութեան հաշվարկումները, հաշվառումն ու հաշվետվութիւնը տանելու մասին ձեռնարկութիւնների ու հիմնարկութիւնների հաշվապահութիւններին հրահանգելը:

գ) Փոխառութեան աշխատանքների և հաշվառման ու բաժնորդները հետ յեղող հաշվարկումների դրվածքի վերահսկողութիւն ու ստուգումը ձեռնարկութիւններում և հիմնարկութիւններում:

25. Դրա հետ միասին խնայողական դրամարկդների վրա յե դրվում՝

ա) Ոժանդակող հանձնաժողովներին և ձեռնարկութիւններին ու հիմնարկութիւններին հաշվապահութիւններին բաժնեգրութեան թերթերով, հրահանգներով, ազիտացիոն և այլ նյութերով մատակարարելը՝ բաժնեգրութեան անցկացման, փոխա-

սուբյան հաշվառման, հաշվարկումների և հաշվետվության հա-
մար:

բ) Բաժնեգրության հաշվառումը, բաժնեգրության հաշվար-
կումները ձեռնարկությունների և հիմնարկությունների հետ,
փոխառության հաշվարկումները միութենական բյուջեյի հետ և
փոխառության մասհանումների հանձնումը հանրապետական
և տեղական բյուջեներին:

գ) Փոխառության պարտատոմսերի վաճառումը կանխիկ
հաշվով՝ անմիջականորեն խնայողական դրամարկղում:

4. ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԸ

26. Պետական վարկին և խնայողական գործին ոժանդակող
հանձնաժողովների վրա յե դրվում՝ ա) փոխառության մասա-
յական-բացատրական աշխատանքների անցկացումը, բ) փոխա-
ռության բաժնեգրության անցկացումն իր կոլեկտիվի աշ-
խատավորների մեջ՝ իր ակտիվից այդ բանի համար առանձնաց-
ված լիազորների միջոցով, գ) հսկողություն՝ փոխառության
հաշվարկումները բաժանորդների հետ ճիշտ կատարելու՝
պարտատոմսերը բաժանորդներին ժամանակին հանձնելու
(բաժնեգրությունն ամբողջությամբ վճարելու դեպքում կամ
բաժանորդը կոլեկտիվից հեռանալու դեպքում) և փոխառության
հաշվառման ու հաշվետվության դրվածքի վրա՝ ձեռնարկու-
թյունների կամ հիմնարկությունների հաշվադահությունում:

27. Ոժանդակող հանձնաժողովները խոշոր ձեռնարկու-
թյուններում պետք է հաշվի առնեն յուրաքանչյուր լիազորից
ստացվող «փոխառության բաժնեգրության քարտերը», նաև լի-
ազորների կողմից ընդունված բաժնեգրության գումարը հատուկ
ցուցակով, վորը կազմվում է հետևյալ ձևով՝ ա) ընդորի ադ-
դանունը, անունը և հայրանունը, բ) ցեխի, բաժնի, բրիգադի
անվանումը, գ) հանձնված «փոխառության բաժնեգրության
քարտերի» քանակը, դ) բաժնեգրության գումարը և յե) հաշ-
վադահության ստորագրությունը քարտերի ընդունման համար:
Այդ ցուցակը պահվում է ոժանդակող հանձնաժողովներում:

28. Փոխառության հաշվարկումների ամբողջ ժամանակամի-
ջոցի ընթացքում ոժանդակող հանձնաժողովները պարտավոր են
աշխատանքի վայրը փոխած նոր յեկած բանվորներին և ծառա-

յողներին հնարավորություն տալ պահպանելու փոխառության
բաժնեգրությունը՝ աշխատանքի նոր տեղում:

Բաժանորդը աշխատանքի նոր վայրը դառնալով՝ ոժանդակող
հանձնաժողովը պարտավոր է պարզել նրա համաձայնությունը՝
պահպանելու բաժնեգրությունը և պարտատոմսերի այն գումա-
րը, վորպիսին նա ցանկանում է վճարել աշխատանքի նոր տե-
ղում՝ մինչև մաս-մաս վճարումների սահմանված ժամկետի
վերջնալը: Բաժանորդի համաձայնության դեպքում ոժանդա-
կող հանձնաժողովի լիազորը բաժնեգրության լիազորվ բաժնեգ-
րություն և ընդունում նրանից, վորը հանձնվում է հաշվադա-
հությանը՝ բաժնեգրության և բաժանորդների հետ յեղող հաշ-
վարկումների հաշվառման համար:

5. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Ձեռնարկությունների և հիմնարկությունների հաշվա-
պահությունների վրա յե դրվում՝

ա) Հերթական մուծումները բաժանորդներից ստանալը՝ այդ
մուծումները բաժանորդների աշխատավարձից պահելու միջո-
ցով:

բ) Բաժանորդներից ստացված փոխառության մուծումները
խնայողական դրամարկղներին հանձնելը:

գ) Պարտատոմսերը խնայողական դրամարկղներից ստանալը
և այդ պարտատոմսերը բաժանորդներին հանձնելը (բաժնեգրու-
թյունը լրիվ չափով վճարելուց հետո, նաև մինչ փոխառության
հաշվարկումների վերջնալը բաժանորդների կոլեկտիվից հեռա-
նալու դեպքում):

դ) Բաժնեգրության հաշվառումը և բաժնեգրությամբ
մուտք յեղած մուծումների գումարի հաշվառումը: Խնայողա-
կան դրամարկղից ստացված փոխառության պարտատոմսերի
պահպանումն ու հաշվառումը: Փոխառության սահմանված
հաշվետվության ներկայացնելը խնայողական դրամարկղին:

30. Ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմա-
կերպությունների գլխավոր հաշվապահները պատասխանատու
յեն փոխառության մուծումները խնայողական դրամարկղների
միջոցով ժամանակին և ամբողջությամբ պետական բյուջեյի յե-
կամուտին հանձնելու համար, վճարված պարտատոմսերը ժա-

մանակին բաժանորդներին հանձնելու և փոխառության սահմանված հաշվետվությունը ժամանակին խնայողական դրամարկղին հանձնելու համար:

31. Բաժանորդներին հանձնելու համար ստացված պարտատոմսերի անվթարության և խնայողական դրամարկղներին հանձնելու նպատակով բաժանորդներին ստացված մուծումների անվթարության համար ձեռնարկությունները, հիմնարկությունները և կազմակերպությունները նյութական պատասխանատվություն են կրում այն խնայողական դրամարկղների առաջ, վորոնց հետ փոխառության հաշվարկումներ են կատարվում:

32. Յուրաքանչյուր ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր և հաշվի առնել:

ա) Յուրաքանչյուր բաժանորդի բաժնեգրության գումարը և մուծումների գումարը, նաև բաժնեգրության ընդհանուր գումարը և մուծումների ընդհանուր գումարն ըստ առանձին ցեխերի և ըստ ձեռնարկության կամ հիմնարկության՝ ամբողջությամբ վերցրած:

բ) Փոխառության բաժանորդների քանակը:

գ) Խնայողական դրամարկղից ստացվող և բաժանորդներին տրվող պարտատոմսերը:

դ) Փոխառության հաշվարկումները խնայողական դրամարկղների հետ:

33. Փոխառության բաժանորդագրության մուծումները և փոխառության պարտատոմսերը ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը հաշվի չե առնում բալանսի համապատասխան հաշիվներով՝ ձեռնարկության կամ հիմնարկության գլխավոր հաշվապահի կողմից սահմանված կարգով:

34. Յուրաքանչյուր բաժանորդի մուծումների հաշվառումը հաշվապահությունը տանում և բանվորների և ծառայողների աշխատավարձի անձնական հաշիվներում կամ «փոխառության բաժնեգրության քարտերում»:

Բացի դրանից, հաշվապահությունը պարտավոր և յուրաքանչյուր ամսի համար առանձին տանել հեռացող բաժանորդների ցուցակ, նշելով նրանում՝ ա) համարներն ըստ կարգի, բ) հեռացող բաժանորդի ազգանունը, անունը և հայրանունը, գ) բաժնեգրության սկզբնական գումարը, դ) մինչև բաժանորդի հեռանալը նրանից մուտք չեղած մուծումների գումարը, յե)

չվճարված մնացած բաժնեգրության գումարը և զ) բաժանորդին տրված պարտատոմսերի գումարը և տալու ժամանակը:

35. Խոշոր ձեռնարկություններում հաշվապահությունը քաժնեգրության հաշվառումը տանում և «փոխառության իրացման հաշվառման մատյանում» (ձև № 139):

Յուրաքանչյուր ցեխում աշխատավարձերի ինքուրույն հաշվարկումներ ունեցող ձեռնարկություններում ձև № 139 մատյանը տանում և յուրաքանչյուր ցեխի հաշվապահությունը, իսկ ձեռնարկության բաժնեգրության հաշվառումն ամբողջությամբ վերցրած՝ տանում և կենտրոնական հաշվապահությունը, ձեռնարկության համար ձև № 139 ամփոփ «փոխառության իրացման հաշվառման մատյանում», № 139 ձևի ցեխային մատյանների հանրագումարների քաղվածքների հիման վրա: Այդ քաղվածքները ցեխերի հաշվապահությունները ներկայացնում են կենտրոնական հաշվապահությանը՝ փոխառության հաշվետվությունն ներկայացնելու համար սահմանված ժամկետներում:

36. Փոխառության բաժնեգրության թերթերը և մյուս փաստաթղթերը դրամական փաստաթղթերի հետ հավասար պահվում են հաշվապահությունում մեկ տարվա ընթացքում՝ սկսած փոխառության հաշվարկումների ավարտման օրից, այսինքն՝ մինչև 1942 թվի հունիսի 1-ը:

37. Պետական, կոոպերատիվ և հասարակական հիմնարկություններն ու ձեռնարկությունները փոխառության բաժնեգրության պահված մուծումները փոխանցում են խնայողական դրամարկղներին անկանխել հաշվարկումների կարգով (ԽՍՀ Միության Ժողովուրդի 1931 թվի մայիսի 25 վորոչումը — ԽՍՀ Մ Ո. Ժ. 1931 թ. № 35, հոդ. 259):

Ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր և հանձնարարություն գուրս դրել փոխառության մուծումների փոխանցման համար, աշխատավարձի մնացած մասի չեկից առանձին և հանձնարարությունները ներկայացնել վարկային հիմնարկությանը՝ աշխատավարձի չեկի հետ միաժամանակ, բաց, համենայն դեպս, վոչ ուշ, քան տվյալ ձեռնարկության, հիմնարկության կամ կազմակերպության բանվորների ու ծառայողների աշխատավարձը տալու համար սահմանված օրից:

Փոխառության բաժնեգրությունից մուտք չեղած մուծում-

ները ձգձգելու համար մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության:

38. Ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր է բաժնեգրության մասին № 16 ձևի հաշվետու տեղեկություններ ներկայացնել այն խնայողական դրամարկիւն, վորի հետ փոխառության հաշվարկումներ են կատարվում: Այդ տեղեկությունները մինչև 1940 թվի ոգոստոսի 1-ը ներկայացվում են ամեն ուր, իսկ հետո — 1940 թվի ոգոստոսի 9-ին, 19-ին և 29-ին և հետագայում վոչ ուշ, քան յուրաքանչյուր ամսի 9-ը՝ նախընթաց ամսվա համար:

№ 16 ձևի հաշվետու տեղեկությունները կազմվում են բաժնեգրության թերթերի և հեռացած բաժանորդներին ցուցակի հիման վրա, իսկ ձեռնարկություններում, վորտեղ տարվում է № 139 ձևի մատյանը, — այդ մատյանի տվյալներով և ստորագրվում են ձեռնարկության կամ հիմնարկության գլխավոր հաշվապահի և ոժանդակող հանձնաժողովի նախագահի կողմից:

Մանրություն.— 1. Լիտերային ձեռնարկությունները և ՆԴԺԿ մարմինները № 16 ձևի հաշվետու տեղեկությունները ներկայացնում են նշելով միայն բաժնեգրության դումարը:

2. Ըստ կենտրոնական (չրջանային) խնայողական դրամարկի կամ պետաշխնայդրամարկի ու պետվարկի վարչության և պետական բանկի տեղական հիմնարկության միջև կայացած համաձայնության № 16 ձևի հաշվետու տեղեկությունները կարող են միավորվել փոխառության մուծումների փոխանցման վճարային հանձնարարությունների հետ, այսինքն՝ ցույց են տրվում հանձնարարության այն որինակի հակադիր կողմում, վորը պետական բանկի հիմնարկը հանձնում է խնայողական դրամարկի:

39. Փոխառության հաշվարկումների ժամանակամիջոցի ընթացքում յերկու անգամ — 1940 թվի ոգոստոսի 1-ին և 1941 թ. փետրվարի 1-ին — ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը, բաժնեգրության թերթերը հաշվելու հիման վրա, հայտնում է խնայողական դրամարկի տեղեկություններ՝ կոլեկտիվի բաժնեգրության ամբողջ դումարն ըստ փոխառության մասերի և պարտատոմսերի բաշխելու մասին: Այդ տեղեկությունները ներկայացնելու համար կիրառվում են № 140 ձևի բլանկները:

40. Հեռացող բաժանորդների հետ հաշիվը փակելու համար ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը խը-

նայողական դրամարկից ստանում է պարտատոմսերի անհրաժեշտ ավանս:

Վոչ ուշ, քան աշխատավարձը վճարելուց 5 ուր առաջ, վորից դանձվում է բաժանորդից փոխառության վերջին մուծումը, ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր է խնայողական դրամարկից ստանալ համապատասխան մասերի և արժողության պարտատոմսեր՝ բաժանորդներին հանձնելու համար:

Խնայողական դրամարկիները պարտատոմսերը ձեռնարկությունների և հիմնարկությունների ներկայացուցիչներին տալիս են № 140 ձևի բլանկների վրա գրվող հավատարմագրերով: Այդ հավատարմագրերով տրված պարտատոմսերի գումարի մասին խնայողական դրամարկը գրավոր կերպով հայտնում է ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությանը (ձև № 140-ա բլանկների վրա):

Խնայողական դրամարկից պարտատոմսեր ստանալու համար տրված հավատարմագրերը ուժի մեջ է տաան որվա ընթացքում՝ հաշվելով այն կազմելու որից:

Ձեռնարկություններն ու հիմնարկությունները պարտավոր են այն խնայողական դրամարկի, վորի հետ փոխառության հաշվարկումներ են կատարում, ներկայացնել այն անձերի ստորագրություններին նմուշները, վորոնց իրավունք է տրվում ստորագրելու խնայողական դրամարկից պարտատոմսեր ստանալու համար տրված հավատարմագրերը, նաև ձեռնարկության կամ հիմնարկության կնիքի տպվածքը: Հավատարմագրերն ստորագրելու համար լիազորված անձերի կազմը փոփոխելու դեպքում՝ ձեռնարկություններն ու հիմնարկությունները ստորագրությունների նոր նմուշներ են ներկայացնում խնայողական դրամարկի:

41. Ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտատոմսերը բաժանորդներին տալիս է այն աշխատավարձի վճարման հետ միաժամանակ, վորից դանձվում է բաժնեգրության վերջին մուծումը: Պարտատոմսերը բաժանորդներին հանձնվում են ստորագրությամբ: Ժամանակավորապես բացակայող (հիվանդութուն, արձակուրդ) կամ կոլեկտիվից հեռացած բաժանորդներին, ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր է պարտատոմսերը հասցրել տուն կամ ուղարկել փոստով գնահատված ծրարով տաան

որվա ընթացքում՝ հաշված մոխառության բաժնեդրուժյան վերջին մոլծոմը գանձելու որից :

Բացառիկ դեպքերում, յերբ ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունից անկախ պատճառներով (բաժանորդի հեռավոր տեղ մեկնելը, յերկաբատե հիվանդությունը և այլն) առանձին բաժանորդներին չեն կարող տրվել կամ ուղարկվել նրանց պարտատոմսերը, ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր ե այդ պարտատոմսերը հանձնել կենտրոնական (չրջանային) խնայողական դրամարկղին փոչ ուշ, քան 1941 թվի հունիսի 1-ը:

Պարտատոմսերը հանձնվում են զինագլուխի ձեռք (ստանց
ալի պարտատոմսերն առանձին բաժանորդներին ամբողջելու)
բաժանորդների անվանական ցուցակի հետ, նշելով յուրաքան-
չյուր բաժանորդից մուտք յեղած մուծումների գումարը :

Մինչ պարտատոմսերը խնայողական դրամարկղին հանձնելը՝ ուժանդակող հանձնաժողովը պարտավոր է հավաստիանալ այն բանում, վոր պարտատոմսերն իսկապես չեն կարող հանձնվել բաժանորդներին։ Կատարված ստուգման մասին ուժանդակող հանձնաժողովը նշում է խնայողական դրամարկղին ներկայացվող բաժանորդների ցուցակում։

42. Վոչ ուչ, քան 1941 թվի հունիսի 1-ը ձեռնարկության կամ հիմնարկության հաշվապահությունը պարտավոր է ինայո՜ղական դրամարկղին ներկայացնել միանվառ հաշվետվություն՝ փոխառության բաժնեդրության հանրադոմարների և պարտա՝ տոմսերը բաժանորդներին հանձնելու մասին :

Հարչվեալովու թխան մեջ նշվում է՝

ա) Ստացված են մուծումներ բաժանորդներից և փոխանցված են խնայողական դրամարկիին :

բ) Ստացված են պարտատոմսեր խնայողական դրամարկից :

դ) Տրված են պարտատոմսեր բաժանորդներին :

դ) Վերադարձված են խնայողական դրամարկդին չիրացված պարտատոմսեր :

յն) Հանձնված են խնայողական դրամարկղին լրիվ Հափով
ձևարված, բայց բաժանորդներին ՀՀանձնված պարտատոմսեր:

ԽՍՀ Միության Զինանոցների Ժողովրդական Կոմիտե—
րի տեղակայ՝ Պ. ՄԱԼԵՏԻՆ

Հ Միութեան Զօրք Պետաշխանադրամարկղներէ և
Երկրի Գլխավոր Վարչութեան պետ՝

፩. ጉሆኑ ስርዓታዊ

ՀՀ Ազգային գրադարան



NL0203394

